ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1) Նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, նիստը սկսելու և ավարտելու ժամերը՝

ՀՀ կրթության և գիտության նախարարություն /հասցե՝ Վ. Սարգսյան 3/, 2016թ. հոկտեմբերի 14, ժամը՝ 15^{00}-17^{00}

2)Նիստի օրակարգը՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի նախագահ, նախարար Լևոն Մկրտչյանի ողջույնի խոսք
2. ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագրի նախագծի ներկայացում /զեկուցող՝ ՀՀ ԿԳՆ զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ՝ Ռ. Ստեփանյան/
3. ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագրի նախագծի քննարկում:

3) Նիստին մասնակցող խորհրդի անդամների, հրավիրված անձանց և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների տվյալները՝

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Լևոն Մկրտչյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Ռոբերտ Ստեփանյան	ՀՀ ԿԳՆ զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ
Արթուր Բաղդասարյան	ՀՀ ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ

Հեղինե Հովհաննիսյան	ՀՀ ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության գլխավոր մասնագետ
Ռուբեն Միրզախանյան	Կրթության և մասնագիտական զարգացման կենտրոն
Իռեն Սարգսյան	Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ
Թամարա Սաղաթելյան	«Լուսնյակ» հասարակական կազմակերպություն
Արևիկ Սարգսյան	Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում
Անուշ Կոստանյան	Դասավանդիր, Հայաստան
Սուրեն Չիբուխչյան	Հայաստանի գործատուների միություն
Սուսաննա Թադևոսյան	Հույսի կամուրջ
Դիանա Հովսեփյան	Հայ օգնության միություն
Կարինե Թումանյան	Հանրային խորհուրդ
Արամ Ծատուրյան	ԳԹԿ թեստաբանության բաժնի գլխավոր մասնագետ
Խորեն Ոսկանյան	ՀՀ Արմավիրի թիվ 6 հիմնական դպրոցի ներառական կրթության համակարգող-սոցիալական մանկավարժ
Ատոմ Հակոբյան	ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի տնօրեն
Հովհաննես Թոքմաջյան	Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար
Ազատ Հոկոբյան	Արարատի պետական քոլեջի դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն
Յաշա Սահակյան	ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն
Ժորա Ջհանգիրյան	Երևանի «Գլաձոր» համալսարանի ռեկտոր
Հասան Թամոյան	«Եզդիների ազգային միություն» Հ/Կ

4) Քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները՝

ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հասարակական խորհրդի անդրանիկ նիստը վարել է խորհրդի նախագահ, ՀՀ կրթության և գիտության

նախարար Լևոն Մկրտչյանը: Իր ներածական խոսքում Լևոն Մկրտչյանը կարևորել է խորհրդի գործունեությունը՝ ընդգծելով, որ հասարակական խորհրդի վարկանիշը պետք է բարձրացնել պատշաճ մակարդակի, որպեսզի այն դառնա ոլորտում իր խոսքն ասող կարևոր մարմին: Լևոն Մկրտչյանն առաջարկել է խորհրդի հետագա նիստերի ընթացքում օրակարգը համատեղ որոշել և ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

Այնուհետև խորհուրդը հաստատել է նիստի օրակարգը և անցել հիմնական հարցին՝ «ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագրի նախագծի» քննարկմանը, որը ներկայացրել է ՀՀ ԿԳՆ զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ Ռ. Ստեփանյանը: Նա նշել է, որ Կրթության զարգացման պետական ծրագիրը միակ ոլորտային ծրագիրն է, որն արժանանում է ԱԺ հավանությանը և ստանում օրենքի ուժ: Ռ. Ստեփանյանի խոսքով՝ մինչև այժմ ծրագիրը 5-ամյա է եղել, իսկ այս անգամ որոշում է կայացվել այն մշակել առաջիկա 10-ամյակի համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջնաժամկետ պլանավորումը 3 տարով է, ինչպես նաև ՄԱԿ-ի օրակարգով միջազգային ծրագրերը մշակվում են մինչև 2030 թվականը: Բանախոսը ներկայացրել է ծրագրի հիմնական տեսլականը, այն է՝ կրթությունը մարդու հիմնարար իրավունք է և հանրային արժեք: Ծրագրում ամրագրվել է, որ կրթության զարգացման գլխավոր նպատակն է կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուր քաղաքացու կյանքի բոլոր փուլերում հնարավորություն է տալիս ստանալ իր պահանջմունքներին, մտավոր կարողություններին ու ձգտումներին համապատասխան որակյալ կրթություն, բավարարում է տնտեսության ու հասարակության պահանջները, լիարժեք ծառայում ազգային շահերին: Որպես հիմնական ռազմավարություն մատնանշվել են՝ կրթության բազմազանեցումը, սոցիալական երկխոսությունը և գործընկերային համագործակցությունը: Բանախոսը ներկայացրել է նաև ծրագրի պետական քաղաքականության սկզբունքները՝ ներառականություն, տարածքային համաչափ զարգացում, ազգային և համամարդկային արժեքների համադրում, թափանցիկություն և հաշվետվողականություն: Ռոբերտ Ստեփանյանը մասնակիցներին է ներկայացրել նաև ծրագրի հիմնական

թիրախները՝

1. Մինչև 2025 թվականը ապահովել բոլոր երեխաների համար մատչելի, հավասար և որակյալ միջնակարգ, ներառյալ՝ նախնական մասնագիտական կրթություն՝ արդյունավետ վերջնարդյունքով:
2. Կրթության բոլոր մակարդակներում ամրապնդել դաստիարակության բաղադրիչը:
3. Մինչև 2025 թվականը ապահովել 3-6 տարեկան բոլոր երեխաների համար հասանելի և որակյալ նախադպրոցական կրթության մատչելիություն և ապահովել 5 տարեկանների առավել ընդգրկվածություն:
4. Մինչև 2025 թվականը զգալիորեն ավելացնել մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն ունեցող երիտասարդների և մեծահասակների թիվը՝ վերջիններիս համար արժանապատիվ աշխատանք գտնելու, գործազրկությունը նվազեցնելու և գործարարությունը խթանելու նպատակով:
5. Մինչև 2025 թվականը ապահովել բոլոր խոցելի խմբերի՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հավասար մասնակցության հնարավորությունը կրթության բոլոր մակարդակներում:

Զեկուցումից հետո խորհրդի անդամները մի շարք հարցեր են ուղղել հիմնական բանախոսին:

ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Յաշա Սահակյանը մտահոգություն է հայտնել, որ փաստաթղթերի ժառանգականության ապահովման խնդիր կա: Ըստ նրա՝ նախորդ նմանատիպ ծրագրում առկա էր որոշակի անհամապատասխանություն՝ ծրագրի հիմնական դրույթների և ընթացիկ վիճակի միջև: Բացի այդ, դպրոցի տնօրենն առաջարկել է ծրագրում շոշափել որակյալ կադրերի պատրաստման խնդիրը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի տնօրեն Ատոմ Հակոբյանը բարձրացրել է գործողությունների կոնկրետ ժամանակացույց ունենալու խնդիրը: Հարցերին ի պատասխան՝ հիմնական զեկուցող Ռ. Ստեփանյանը նշել է, որ Կրթության զարգացման պետական ծրագիրն իր գործառնական նշանակությամբ ավելի շատ կրթական քաղաքականության ռազմավարական պլանավորման փաստաթուղթ է, որտեղ ամրագրված են

ոլորտի հիմնական սկզբունքները և թիրախները: Ըստ բանախոսի՝ եթե ծրագրում ամրագրվի գործողությունների հստակ ժամանակացույց, ապա 10 տարվա կտրվածքով այն բավականին անիրատեսական և ռիսկային կարող է լինել:

Հանրային խորհրդի ներկայացուցիչ Կարինե Թումանյանը բարձրացրել է երկու տարին մեկ անգամ ծրագրով նախատեսված միջոցառումների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու անհրաժեշտության, ինչպես նաև առաջնային և երկրորդային հարցերը հստակ տարբերակելու վերաբերյալ հարցերը:

Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչ Սուրեն Չիբուխչյանն արձանագրել է ծրագրում տեղ գտած նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության և կրթություն-աշխատաշուկա կապի ապահովման խնդիրը:

Երևանի «Գլաձոր» համալսարանի ռեկտոր Ժորա Ջհանգիրյանը նշել է, որ Կրթության զարգացման պետական ծրագրի նախագիծը բավականին լուրջ փաստաթուղթ է, սակայն որպեսզի իրագործվեն ծրագրով նախատեսված բոլոր դրույթները, անհրաժեշտ են համապատասխան ֆինանսական մեխանիզմներ և ներդրումներ, որպեսզի այն չմնա ընդամենը թղթի վրա: Բացի այդ, Ժորա Ջհանգիրյանը մտահոգություն է հայտնել, որ եթե ծրագիրը դիտարկվի որպես զուտ հայեցակարգային փաստաթուղթ, ապա հնարավոր է, որ դրա իրականացման հետագա ընթացքի համար ոչ ոք պատասխանատվություն չկրի:

«Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում կազմակերպության» նախագահ Արևիկ Սարգսյանն իր գոհունակությունն է հայտնել ներկայիս փաստաթղթի կապակցությամբ՝ ընդգծելով, որ այս ծրագրում ավելի կոնկրետ թիրախներ ու գործողություններ են մատնանշված: Նախկինները, ըստ նրա, կրել են առավել հռչակագրային բնույթ:

Հնչել նաև այլ մոտեցումներ և կարծիքներ ինչպես ներկայացված ծրագրի, այնպես էլ կրթության ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ:

5) Նիստին մասնակցող խորհրդի անդամների ներկայացրած հանրային առաջարկները, դիտողությունները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները՝

Խորհրդի նիստին պայմանավորվածություն է ձեռքբերվել 10-օրյա ժամկետում ՀՀ ԿԳՆ զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչություն ներկայացնել «ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագրի նախագծի» վերաբերյալ ծրագրային առաջարկներ և դիտողություններ, որոնք, ըստ անհրաժեշտության, կներառվեն ծրագրի նախագծում:

6) Ընդունված որոշումները՝ ներառյալ տվյալ որոշման վերաբերյալ քվեարկության արդյունքները՝

Լսելով և քննարկելով ՀՀ ԿԳՆ զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետ Ռ. Ստեփանյանի զեկույցը՝ «ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագրի» նախագծի վերաբերյալ, խորհուրդը որոշել է՝

1. Ընդունել ի գիտություն զեկույցը:
2. Հավանություն տալ «ՀՀ կրթության զարգացման 2016-2025 թթ. պետական ծրագրի նախագծին»:

Որոշումն ընդունվել է նիստին ներկա խորհրդի անդամների՝ 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով:

Նիստի նախագահող՝

ՀՀ կրթության և գիտության նախարարին կից հանրային խորհրդի նախագահ
Լևոն Մկրտչյան

Արձանագրող՝

ՀՀ ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության գլխավոր մասնագետ Հեղինե Հովհաննիսյան